



ԱՐՄԵՆԻԱ
ԻՆՇՈՒՐԱՆՍ

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ գլխավոր տնօրենի
«12» օգոստոսի 2019 թ. թիվ 130-19Լ հրամանով

ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ապահովադիր

Ապահովադիր կարող է հանդիսանալ մինչև 65 տարեկան ֆիզիկական անձը:

Ապահովագրված անձ

Ապահովագրված անձինք կարող են հանդիսանալ Ապահովադրի 1-65 տարեկան կինը/ամուսինը, երեխաները, ամուսինների ծնողները, քույրերը և եղբայրները, ովքեր Ապահովադրի հետ վարում են համատեղ տնտեսություն:

Փոխհատուցում ստացող անձ

Ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրված անձինք, որոնց կյանքին, առողջությանը պատճառվել է վնաս:

Ապահովագրական հատուցման չափ

Մարմնական վնասվածք դժբախտ պատահարի արդյունքում

Հատուցումն իրականացվում է համաձայն «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ Դժբախտ պատահարներից կամավոր ապահովագրության կանոնների (կախված վնասի բնույթից տոկոսային):

I, II, III խմբի հաշմանդամություն դժբախտ պատահարի արդյունքում՝

ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԴԺՔԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հատուցումն իրականացվում է միանվագ՝ կախված ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Ապահովագրված անձի բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում նշանակված հաշմանդամության կարգից.

- Հաշմանդամության I կարգ նշանակելու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովագրական գումարի 80%-ի չափով.
- Հաշմանդամության II կարգն նշանակելու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովագրական գումարի 60%-ի չափով.
- Հաշմանդամության III կարգ նշանակելու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովագրական գումարի 40%-ի չափով:

Մահ դժբախտ պատահարի արդյունքում

Հատուցումն իրականացվում է միանվագ՝ Ապահովագրական գումարի 100%-ի չափով:

Եթե ապահովագրական պատահարի արդյունքում առաջացած ծախսերը հատուցման ենթակա են երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվության ապահովագրության պայմանագրով (ԱՊՊԱ և այլն), ապա Ապահովագրողը վճարում է միայն այդ պայմանագրով սահմանված հատուցման սահմանաչափը գերազանցող ծախսերը:

Ապահովագրական պատահար

Ապահովագրական պատահար է համարվում ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարը, որի հետևանքով Ապահովագրված անձը ստացել է մարմնական վնասվածքներ, հաշմանդամություն կամ մահացել է:

Դժբախտ պատահար է համարվում արտաքին ֆիզիկական ներգործության արդյունքում առաջացած փաստացի, հանկարծակի կամ չակնկալվող իրադարձությունները, որոնց արդյունքում առաջ է գալիս Ապահովագրված անձի տրավմատիկ վնասվածքները, առողջության խանգարումները, անաշխատունակությունը և/կամ մահը՝ անկախ Ապահովագրված անձի առողջական վիճակից և ցանկացած առկա հիվանդությունից:

Աշխատունակության կորստի տակ հասկացվում է Ապահովագրված անձի աշխատելու ֆիզիկական ունակության կորուստը՝ սոցիալական և բժշկական տեղեկանքի առկայությամբ:

Ապահովագրության տարածք

Հայաստանի Հանրապետություն և Արցախի Հանրապետություն

Ապահովագրական գումար, ապահովագրավճար, գործակալներին տրվող միջնորդավճարի չափ

ՀՀ դրամ

Ապահովագրական գումար	Ապահովագրավճար	Միջնորդավճարի չափ
----------------------	----------------	-------------------

ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԴԺՔԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

յուր.անձի համար		(% ապ.վճարի նկատմամբ)
500.000	5.000	35%
1.000.000	9.000	35%
2.000.000	12.000	35%

Ոչ պայմանական չհատուցվող գումար

Չի կիրառվում

Ապահովագրավճարի վճարման կարգ և ժամկետ

Միանվագ, ապահովագրության պայմանագրի կնքման պահին

Պայմանագրի գործողության ժամկետ

Ապահովագրության պայմանագիրը կնքվում է 1 տարի ժամկետով

Պահանջվող փաստաթղթեր և տեղեկություններ

- Անձը հաստատող փաստաթղթեր
- Հեռախոսահամար

Ապահովադրի գործողությունները պատահար տեղի ունենալու դեպքում՝

- Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է պատահարը տեղի ունենալուց հետո Պայմանագրով սահմանված ժամկետներում, բայց ցանկացած դեպքում 60 օրից ոչ ուշ, տեղեկացման փաստը հավաստող ցանկացած միջոցով, պատահարի մասին հայտնել Ապահովագրողին:
- Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուն հաջորդող օրվանից հաշվված առավելագույնը 15 աշխատանքային օրվա ընթացքում միանվագ իրականացնում է ապահովագրական հատուցումը: